

# ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ

ՀԱՄԱ-ԽԱՐԲԵՐԴՑԻԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

ՏԱՄՆԵՐՈՐԴ ՊԱՏԳՍՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵՒ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻ

## ՏԵՂԵԿԱԳԻՐ



ՍԵՊՏԵՄԲԵՐ 26, 1937

361

2-20

361  
Z - 20

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ**

ՀԱՄԱ-ԽԱՐԲԵՐԴՑԻԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԵԿԱՆ ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

Գումարում Սեպտեմբեր 26, 1937, Կիրակի ժամը 10-30ին Կ. Ա. Նիւ Եորքի Ս. Կալ Եկեղեցւոյ Արահին մէջ :

Միութեանս Ատենապետ՝ Պ. Մուշեղ Աճէմեան ներկայ եղող Պատգամաւորներու եւ ներկայացուցիչներու թիւը ստուգելով, գտաւ որ մեծամասնութիւն կը կազմէին, որով ժողովը օրինաւոր կերպով բացուած յայտարարեց :

Բարի գալուստի եւ շնորհակալութեան մի քանի հակիրճ խօսքերէ վերջ՝ Պ. Աճէմեան խօսեցաւ Կեդր. Գործ. Մարմնի տարած շինարարական աշխատութեանց շուրջ, որը ծափերով գնահատուեցաւ :

Օրուան Դիւանի ընտրութեան համար ընտրուեցան երեք հոգիներ յանձնախումբ մը Պրնք. Տիգրան Էքմէքճեան, Պաղտասար Կիւլխասեան եւ Գրիգոր Համբարձումեան : Եռապատիկ ցանկ մը պատրաստելով ժողովիս ներկայացուցին. զաղանի քուէով Դիւանի համար ընտրուեցան Պրնք. Գէորգ Դանիէլեան՝ Ատենապետ եւ Լեւոն Պողոսեան՝ Ատենաղպիր : Յաջորդ առաւելագոյն քուէ ստացողներն էին Պ. Պաղտ. Կիւլխասեան՝ Ատենապետ, եւ Տիկ Փարիզ Ստեփանեան՝ Ատենաղպիր :

Պատգամաւորներու ճշգումի պարագային՝ յայտնի եղաւ որ Հայէպի երեք ներկայացուցիչներէն միայն երկուքը ներկայ էին, որով երրորդ ներկայացուցիչ վեր. Պէննէեանի ներկայութիւնը մինչեւ վերջին պահուն չի կրցինք ապահովել :

Նորընտիր Դիւանի կողմէն Ատենապետ՝ Պ. Գ. Դանիէլեան շնորհակալութիւն յայտնելէ յետոյ իրեն վստահուած պաշտօնին համար, խնդրեց ժողովականներէն, որ յարգեն ժողովի լրջութիւնը եւ օժանդակեն իրեն՝ օրուան ընթացիկ հարցերուն շուսափոյթ եւ օրինաւոր լուծում տալու համար :

Պատգ. ժողովին կը մասնակցէին Մասնաճիւղերէն՝ 17 պատգամաւոր, Հայրենակցականներէն՝ 6 պատգամաւոր, եւ երեք

3.1.05.2013

ԳՎ. 809

Ներկայացուցիչներ Կեղրոնի կողմէն. որով 26 ձայն կը ներկայացնենք ժողովը հետևեալ կերպով. —

Կեղր. ԳՈՐԾԱԳԻՐ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԷՆ  
Մուշեղ Անէմեան  
Յարութիւն Խօլլիկեան  
Միհրան Գօփրեան

ՊՈՍԹԸՆԻ ՄԱՍՆԱՃԻԻՂԷՆ ՊԱՏԳԱՄԱԻՈՐՆԵՐ  
Գրիգոր Համբարձումեան  
Արա Կաստանեան  
Ղուկաս Արօյեան

ՆԻԻ ԵՈՐՔԻ ՄԱՍՆԱՃԻԻՂԷՆ  
Սմբատ Վարդապետեան  
Աւետիս Արքահամեան  
Տիկ. Ա. Թաթևոսեան

ՈՒՍՏՐԻ ՄԱՍՆԱՃԻԻՂԷՆ  
Տիգրան Էփմէֆեան  
Գեորգ Գանիկեան

ՖԻԼԱՏԷԼՅԻՈՅ ՄԱՍՆԱՃԻԻՂԷՆ  
Համբարձում Սիմոնեան

ՈՒՈԹՐԹԱՈՒՆԻ ՄԱՍՆԱՃԻԻՂԷՆ  
Սէմ Ահարոնեան  
Տիկ. Փարիգ Ստեփանեան

ՃԻԻՆԻԸՐ ԼԻԿԷՆ  
Կարապետ Թալանեան  
Յակոբ Տօնապետեան

ԼՕՍ ԱՆՃԷԼԷՍԻ ՄԱՍՆԱՃԻԻՂԷՆ  
Սարգիս Կօշկարեան  
Սարգիս Թէֆմէեան

ՀԱԼԷՊԻ ՄԱՍՆԱՃԻԻՂԷՆ  
Յակոբ Բարեջանեան  
Գեորգ Կիւլիսաեան

Հայրենակցական Ընկերութիւններէն ներկայ էին. —



620-35

ԽԱՐԲԵՐԳԻ ԿՐԹԱՍԻՐԱՅԻ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑԻԶՆԵՐ

Լեւոն Պողոսեան  
Թաթևոս Հէտիցեան

ՀԻԻՍԷՅՆԻԿԻ ՎԵՐԱՇԻՆԱՅ ՄԻՈՒԹԵՆԷՆ  
Պաղտասար Կիւլիսաեան  
Յովհաննէս Նահիկեան

ԲԱԶՄԱՇԷՆԻ ԼՈՒՍ. ՈՒՍՈՒՄՆ. ՄԻՈՒԹԵՆԷՆ  
Յակոբ Խուկոնեան  
Յովակիմ Նիկողոսեան

Բացակայ էին հետևեալ Մասնաճիւղերը. — Շիրակօ, Վոքէ-կրն, Մէքսիբօ, ինչպէս նաև Յրանճալի շրջանի Մասնաճիւղերը: Հայրենակցականներէն կը բացակայէին Իջմէն, Հողէն, Քէսրի-կը, Փարչանճը, Վերի Խոխ եւ Մեծկերտը: Հողէի Ուսմ. Ընկե-րութիւնը նամակով մը իմացուցած էր իր չի գալուն պատճառ-ները. իսկ Փարչանճի Ուսմ. Ընկերութիւնը, հակառակ որ նա-խապէս նամակով մը մեզ իմացուցած էին իրենց ընտրուած եւ լիազօրուած պատգամաւորներու անունները (Մանուկ Եավանեան եւ Խ. Կէլչենեան), կը բացակայէին ժողովէն: ✓

ՕՐԱԿԱՐԳ. —

1. — Ընթերցում Նախորդ Պատգ. ժողովի Արձանագրութեան.
2. — Կեղ. Գործադիր Մարմնոյ Տարեկան Տեղեկատուութիւն.
3. — Գանձապահի կողմէն Հաշուետուութիւն:
4. — Յանձնախումբերու Ընտրութիւն.
  - Ա. — Հարցեր Դասաւորող
  - Բ. — Հաշուեֆննիչ
  - Գ. — Ընտրական
  - Դ. — Բանաձեւեր Պատրաստող.
5. — Մասնակիւղերու եւ Օժանդակ Ընկերութեանց Զեկոյց.

1. — Ժողովիս Ատենադպիր Լեւոն Պողոսեանի կողմէ կարգացուցաւ նախորդ Իններորդ Պատգմ. Ժողովի արձանագրու-թիւնը առ ի գիտութիւն:

2. — Կեդր. Գործը. Մարմնի Ատենադպիր՝ Գէորգ Կիւլխասեան գրաւոր կերպով Կեդրոնի մէկ տարուան գործունէութեան զեկոյցը ըրաւ, մի առ մի թուելով իրենց տարած աշխատանքները շինարարական ճակատին վրայ թէ հոս, թէ արտասահման, եւ թէ վերաշինուող Նոր Խարբերդին մէջ :

Գ. Կիւլխասեան իր ընդարձակ եւ խնամով պատրաստուած տեղեկագիրը վերջացուց կարգ մը խիստ կարեւոր թերադրութիւններով: Ժողովականները առանց բացառութեան յարուած ուշադրութեամբ մտիկ ըրին եւ ծափերով գնահատեցին Կեդր. Վարչութիւնը ընդհանրապէս եւ Ատենադպիր Գ. Կիւլխասեանի աշխատանքները մասնաւորապէս:

Ծանօթ. — Արձանագրութեան վերջի բաժնին մէջ արդէն պիտի գտնէք բոլոր մանրամասնութիւնները:

Ժողովին ներկայ էր Տիթրոյիթէն Երզնկայի Վերաշինաց Միութեան անդամներէն Պ. Ռուբէն Սրապեան, որ վերաշինուող Հայաստանի մասին տուաւ շինարարական կարեւոր ծանօթութիւններ: Ան շեշտեց Միջ-Հայրենակցական Միութեան պէտքը: Պ. Սրապեանի տեղեկութիւններն ու թերադրանքը յուսեցաւ մասնաւոր հետաքրքրութեամբ:

Ան շնորհակալութեամբ իր խօսքը վերջացուց, յաջողութիւն մաղթելով Պատգմ. Ժողովին:

3. — Գանձապահ Յրթ. Խօլիկեանի նախապէս պատրաստած հաշուեցուցակը, որ տպագրութեան տուած էր, ներկաներուն տրուեցաւ: Բացատրութեան համար եղան քանի մը հարցումներ որոնց սիրալոթար կերպով պատասխանուեցաւ:

Հաշուեքննիչ Յանձնախումբին կողմէ մանրամասն կերպով քննուելէ ետք Հաշուեկշիւը վաւերացուեցաւ:

(Տես Հաշուեցուցակը 16-17րդ. էջերուն վրայ):

Դիւանին յանձնուեցաւ երկու չէքեր, մէկը Խարբերդի Կրթ-թատրիցի Փրովիտէնսի Մասնաճիւղի կողմէն §206-32. իսկ միւսը Համա-Խարբերդցիական Միութեան Ֆիլատէլիոյ Մասնաճիւղի կողմէն §63-00:

4. — Յանձնախումբերու Ընտրութիւն:

Ժողովը իրաւասութիւն տուաւ Դիւանին յարմարագոյն նրկատած անձերը Յանձնախումբերու անդամ նշանակելու: Նշանակուեցան հետեւեալները. —

1. Հարցեր Դասաւորող Յանձնախումբ  
Յովհաննէս Նահիկեան  
Յակոբ Բարեջանեան  
Յակոբ Տօնապետեան
2. Հաշուեքննիչ Յանձնախումբ  
Աւետիս Աբրահամեան  
Յակոբ Խուկոեան  
Համբարձում Սիմոնեան
3. Ընտրական Յանձնախումբ  
Տիգրան Էփէֆեան  
Տիկ. Փարիզ Ստեփանեան  
Թաքէոս Հէտիցեան
4. Բանաձեւեր Պատրաստող Յանձնախումբ  
Սմբատ Վարդապետեան  
Յրթ. Խօլիկեան  
Պաղտ. Կիւլխասեան

5. — Մասնախիղերու եւ Օժանդակ Ընկերութեանց Զեկոյց:

Ա. Պոսթրնի Մասնաճիւղի պատգամաւոր Գրիգոր Համբարձումեան կարգաց իր գրաւոր տեղեկագիրը, որմէ յայնտի եղաւ, որ Պոսթրնի Մասնաճիւղը տարուայ մը շրջանին կատարելապէս լրացուցած է Կեդրոնի կողմէն իրեն բաժին հանուած քօթան: Աւնեցած են երկու կարեւոր ձեռնարկներ, Փետր. 22 եւ Օգոստ. 1, որոնք պատկուած են յաջողութեամբ: Ընկերութեանս Տասներորդ Տարեդարձին առթիւ սարքած են հրատարակային ձեռնարկ մը, որուն առթած բարոյական օժանդակութիւնը շատերու կողմէն գնահատուած է: Այժմէական խնդիրները լուծելու համար՝ ունեցած են կանոնաւոր անդամական եւ վարչական ժողովներ: Այցելութիւններ տուած են Խարբերդցի հայրենակիցներու ննջեցեալներու պարագաներուն եւ փոխան ծաղկեպսակի կոկիկ դումարներ ապահոված են: Գրիգոր Համբարձումեանի կարծ եւ ամփոփ տեղեկագիրը գնահատուեցաւ ծափերով:

Բ. Նիւ Եորքի Մասնաճիւղի կողմէն ամփոփ տեղեկատրու-

թիւն մը ըրաւ պատգամաւոր Աւետիս Արրաճամեան: Ունեցած են երկու գեղեցիկ ձեռնարկներ, որոնք տուած են նիւթական եւ բարոյական յաջողութիւններ: Յաճախ վարչական եւ անգամական ժողովներ ունեցած են:

1937-ին Նիւ Եորքի շրջակայքը գտնուող եւ այս Ընկերութեան օգտակար անհատներու անակնկալ մահերը պատճառ դարձած են դործի եւ ձեռնարկներու տկարացման: Գայլիք տարուան համար կը խոստանան իրենց լաւագոյնը ընել: Ընկերութեան գանձին Կեդրոն զրկած են \$700: Փոխան ծաղկեպսակի հանդանակութիւններուն հսկած եւ իրենց բաժին պարտականութիւնը կատարած են: Աւետիս Արրաճամեան իր տեղեկատուութիւնը վերջացող մազթանքներով եւ գնահատուեցաւ:

Գ. Ուստրի Մասնաճիւղի պատգամաւորներէն Տիգրան Էքմէքճեան տուաւ իր բերանացի տեղեկատուութիւնը: Տիրող տրնատեսական պայմանները պատճառ դարձած են Ուստրի Խարբերողի հայրենակիցներուն, որ չի կրնան իրենց բաժին հանուած քօթան լրացնել: Բայց Ուստրը կը խոստանայ Նորակազմ Վարչութեան օժանդակութեամբ գայլիքին այս ամէն դժուարութեանց դէմ պայքարել ու որպէս կատարելայ Մասնաճիւղ առաջին կարգի վրայ կանգնել: Եթէ ջանք թափուի, վստահ ենք, որ Ուստրն ալ իր նախանձանդիքը Խարբերողներով՝ յաջողութիւն կը գտնէ:

Դ. Նիւ Եորքի Կանանց Մասնաճիւղի կողմէն արտադրուեցաւ Տիկ. Գամպուրեան: Տարած են մեծ աշխատանք ամէն գծի վրայ. Արանց Մասնաճիւղին հետ կողք կողքի աշխատած են Ընկերութեանս որդեգրած նպատակներուն համար: Կը խոստանան իրենց ուսերուն վրայ դրուած որեւէ պարտականութիւն սիրայօթար կերպով տանիլ: Թէպէտեւ իրենց ժրջան աշխատող եւ Նոր Խարբերողի սիրով տարուած ընկերուհի Տիկ. Թուրվանտա Կէլճիբեանի անակնկալ մահը քիչ մը դանդաղեցուցած է դործը, սակայն կը խոստանան անոր թողուցած բացը լրացնել:

Տիկ. Գամպուրեանի քաջախիտական խօսքերը ներկաներէն ջերմապէս գնահատուեցաւ:

Ե. Յիլատէլի Մասնաճիւղի կողմէն բանաւոր գեկոյց մը տուաւ Համբարձում Սիմոնեան: Ունեցած են երեք ձեռնարկներ: Ընտրած են նոր երկսեռ վարչութիւն մը, որ քաջախիտական է, իրենց վրայ դրուած պարտականութիւնները մասամբ լրացնելուն

համար: Հայրենակցականներու հետ միասնաբար ձեռնարկ մը տուած են, որուն նիւթական հասոյթը՝ բերած էին \$63.00:

Յիլատէլի Միջ-Հայրենակցական Միութեան ամենաջերմ հաւատացողներէն եղած է: Կը խոստանան գայլիքին իրենց աշխատանքը կրկնապատել: Համբարձում Սիմոնեանի խօսքերը վերջացան ծափերով:

Զ. Ուստրի Մասնաճիւղի պատգամաւոր Տիկ. Փարիզ Ստեփանեան տուաւ գրաւոր գեկոյց մը, որմէ յայտնի եղաւ թէ բաւական մեծ թիւով տրաւոր անգամներ ունին: Յաճախ ունեցած են անգամական եւ վարչական ժողովներ: Իրենց լաւագոյն աշխատանքը եղած է Վիճակահանութեան տոմսերու վաճառումը սրն տակաւին աւարտած չէ: Պոսթընի Մասնաճիւղի երկու ձեռնարկներուն բերած են իրենց գնահատելի օժանդակութիւնը: Կը խոստանան աւելի ուժ տալ իրենց առանձին ձեռնարկներուն աւելի խոշոր արդիւնք ապահովելով: Տիկ. Ստեփանեան վերջացուց իր խօսքը յաջողութեան մազթանքներով:

Ի. Ճիւնիքը Լիկ Պոսթըն: Յակոբ Տօնապետեան եւ Կարապետ Թարանեան՝ երկու պատգամաւորներն ալ լաւ եւ հասկնալի կերպով արտադրուեցան: Թէեւ այս տարի նիւթական օժանդակութիւն տուած չեն Կեդրոնին, բայց խոստացան յաջորդ տարի անպայման նիւթական գոհացուցիչներ տալ Նոր Խարբերողի շինարարութեան համար: Պոստոնի Մասնաճիւղի երկու ձեռնարկներուն ալ անոնք իրենց գնահատելի մասնակցութիւնը բերած են անցելոյն մէջ:

Ը. Լօս Անճէլլոսի Մասնաճիւղը, որ իր ձայնը ժողովին զըրկած էր, ներկայացուեցան Յրթ. Սոլլիկեանի կողմէն, որ տուաւ տեղեկութիւններ անոնց կատարած աշխատանքին մասին: Քայլի-Փօրնիոյ շրջանը միակ եղած է, որ այս ընկերութեան տուած է մեծ օժանդակութիւն: Անոնց գոհացուցիչ տպին ներկաճերու կողմէն գնահատուեցաւ:

Ժ. Շիքալոյի եւ Վոքէկընի Մասնաճիւղերու, ինչպէս նաեւ բացակայ բոլոր Մասնաճիւղերու մասին բացատրութիւններ տըրուեցան Կեդրոնի կողմէն: Շիքալօն ունեցած է մի քանի ձեռնարկներ, որոնց նիւթական օժանդակութիւնը ասանին Կեդրոն զրկած են: Պատգմ. ժողովին ձայն չէին զրկած:

ՃԱ. Յրանսայի Շրջանի Մասնաճիւղերու մասին Կեդրոնին

տուած զեկոյցէն յայտնի եղաւ, որ Ֆրանսան եղած է Միութեանս նախանձախնդիր շրջաններէն մին: Թէ բարոյապէս եւ թէ նիւթապէս սատարած են Միութեանս: Նոր Խարբերդի շինարարութեան համար իրենց օժանդակութիւնը բերած են \$240.00: Օրինաւոր կապ պահած են Կեդրոնին հետ: Ֆրանսայի Շրջ. Կեդր. Վարչութեան, ինչպէս նաեւ Մասնաճիւղերու տարած աշխատանքը գնահատուեցաւ Ժողովիս կողմէն:

Օժանդակ Ընկերութեանց ներկայացուցիչները, որոնք ներկայ էին Ժողովին, տուին իրենց բանաւոր զեկոյցը: Անոնք բոլորն ալ տուած ու բերած էին իրենց նիւթական օժանդակութիւնները, որոնք ջերմ ծափերու արժանացան ներկայներէն:

Անոնք խոստացան իրենց կարելի ամէն միջոցներով զարկ տալ Նոր Խարբերդի շինարարութեան ու զարգացման եւ Պատգմ. Ժողովի տպաւորութիւնն ու թելադրանքը պատկան տեղը հաղորդել: Փափաք յայտնեցին որ յառաջիկային Կեդր. Վարչութիւնը նոր եռանդով սկսի շինարարութեան, որպէսզի ներգաղթի համար նպաստաւոր պայմաններ ստեղծուին Նոր Խարբերդի մէջ:

Հայրենակցականներու կողմէն այս մտօք արտայայտուեցան Պրնք. Լեւոն Պողոսեան՝ Խարբերդի Կրթասիրացի կողմէն, Պաղ. Կիւլիսասեան՝ Հիւսէյնիկի Վերաշինացի կողմէն, Յակոբ Խուրդեան՝ Բագմաշէնի Լուս. Ուսում-ի կողմէն: Ամէնքն ալ գնահատուեցան ծափերով:

Մասնաճիւղերու եւ Օժանդակ Հայրենակցականներու տուած զեկոյցներէն այնպէս ենթադրուեցաւ, որ մեր Մասնաճիւղերէն ոմանք իրենց հաւաքական գործունէութեան մէջ անկալուած աշխատանքները տարած չեն: Սակայն, Կեդրոնի նախաձեռնութեամբ յառաջիկային կրնան այս թերութիւնները սրբազրել եւ այս Միութիւնը գնել աւելի ամուր հիմերու վրայ:

Ներկաները, բոլորն ալ, խոստացան շատ աւելի նոր թափով յառաջ տանիլ գործը զայլք տարեշրջանին:

Ճաշի համար մէկ ու կէս ժամուան դաղար տրուեցաւ, յանձնախումբերուն եւս պատեհութիւն տալով աշխատելու:

Պատգմ. Ժողովին մասնակցող պատգամաւորներն ու ներկայացուցիչները անակնկալ կերպով հիւրասիրուեցան Նիւ Եորքի Կանանց Մասնաճիւղի կողմէն պատրաստուած ճոխ սեղանով մը: Սպասարկութիւնն ու կարգապահութիւնը անթերի էր: Սեղանին շուրջ արտայայտուեցան պատգամաւորներէն ոմանք եւ կատակարանութեամբ՝ ստեղծեցին հաճելի եւ տաքուկ միջոցառում մը:

Ժողովի նախորդ նիստի արձանագրութիւնը կարգացուելով վաւերացուեցաւ:

Հարցերը Դասաւորող Յանձնախումբը իր գործը լրացուցած բլլալով՝ հետեւեալ Օրակարգը ներկայացուց.—

1. Գործիչի մը հարցը.
2. «Նոր հարբերդ» Պարբերաբերքի հարցը.
3. Տարեկան Պիւտնէի սահմանում.
4. Նոր հարբերդի Հիմնարկութեան Տարեդարձի օր նշանակել.
5. Օժանդակ Ընկերքը. եւ Ուսմաց.—ներու Պարտականութիւնը.
6. Տար նոր Տուներու Շինութեան հարցը.
7. Միջ-Հայրենակցական Միութեան մը կազմութեան հարց.
8. Պոսքրնի շրջանին համար Շրջ. Մարմնոյ մը հարցը.
9. Հաշուեքննիչ Յանձնախումբի Տեղեկատուութիւնը.
10. Բանաձեւերու հաշում եւ քուէարկում.
11. Յաջորդ Պատգմ. Ժողովի Տեղն ու Ժամանակը.
12. Կեդրոնի. Գործադիր Մարմնոյ Ընտրութիւն:

1. Գործիչի մը հարցը.

Նկատելով որ Միութեանս անդամները եւ Խարբերդի Ժողովուրդը առհասարակ ցրուած են Ամերիկայի մէջ, ու շատ տեղեր Մասնաճիւղեր իսկ գոյութիւն չունին, մեծամասնութեամբ որոշուեցաւ որ մէկ տարուան համար յարմար գործիչ մը վարձուի, որը գործէ զինք վարձող մարմնոյն հակակշորն տակ:

2. «Նոր հարբերդ» Պարբերաբերքի հարցը.

Նկատելով, որ թերթ մը իր որոշ եւ բարերար զերը կրնայ կատարել, որոշուեցաւ «Նոր Խարբերդ» պաշտօնաթերթը հրատարակել տարին առ առաւել 4 թիւ, Կեդ. Գործ. Մարմնոյ պատասխանատուութեան եւ հսկողութեան ներքեւ:

3. Տարեկան Պիւտնէի սահմանում .

Պատգմ. Ժողովս 1937-1938 տարեշրջանին համար պիւտնէ սահմանեց առ առաւելն՝ \$2,500.00 : Սոյն գումարով պիտի հոգացուն Գործիչի, Պարբերաթերթին եւ Դիւանական ծախսերը :

4. Նոր հարբերդի Հիմնարկութեան Տարեդարձի օր նշանակել .

Որոշուեցաւ որ Նոր Խարբերդի Հիմնարկութեան Օրը՝ տարեդարձի օր նշանակուի Կե'րոնի կողմէն եւ պատշաճօրէն տօնուի ամէն տարի միեւնոյն օրը, կանխաւ Մասնաճիւղերուն տեղեկացընելով այս պարագան :

5. Օժանդակ Ընկերքը . եւ Ուսմնոց .-ներու Պարտականութիւն .

Պատգմ. Ժողովս հաճոյքով կարճանագրէ, որ անցնող տարիներու ընթացքին Օժանդակ Հայրենակցականները Նոր Խարբերդի շարժումին տուած են իենց նիւթական եւ բարոյական օժանդակութիւնը . Սակայն, նկատելով որ զեռ կան կարգ մը Հայրենակցաաններ, որոնք զանազան պատճառաւ հեռու մնացած են, կը հրահանգէ նորընտիր Կեդր. Գործ. Մարմինը, որ հնարաւոր բոլոր միջոցներով ջանայ անոնց գործակցութիւնն ալ ապահովել :

6. Տասը նոր Տուներու Շինութեան հարցը .

Որոշուեցաւ, որ յաջորդ տարեշրջանին մեծ թափով յառաջ տարուի քէմփէյն մը, որ գէթ տարին լրանալէն առաջ՝ կարող ըլլանք Տասը նոր Տուներ եւս կառուցանել Նոր Խարբերդի մէջ :

7. Միջ-Հայրենակցական Միութեան մը կազմութեան հարց .

Ժողովս որոշեց որ, եթէ այ տեսակ հարց մը երեւան գայ, Մասնաճիւղերը տեղւոյն վրայ կրնան ընդ առաջ երթալ յարմար տեղած կերպով՝ տեղեակ պահելով Կեդրոնը, ինչպէս որ նախորդ Գրգ. Պատգմ. Ժողովը այս ուղղութեամբ որոշում անցուցած է :

8. Պոսքրնի շրջանին համար Շրջ. Մարմնոյ մը հարցը .

Նկատի ունենալով, որ Կեդր. Գործ. Մարմինը կը գտնուի Պոսքրն եւ այս առաջարկն ալ կուգայ Պոսքրնի շրջակայքէն, ներկայիս վաղահաս նկատուեցաւ Շրջ. Մարմնոյ մը գոյութիւնը :

9. Հաշուեքննիչ Յանձնախումբի Տեղեկատուութիւնը .

Հաշուեքննիչ Յանձնախումբի կողմէն Պ. Աւետիս Արրահամեան տեղեկացուց, որ մէկ տարուան շրջանի հաշուեցուցակն ու ստմարները մանրամասնօրէն քննելով՝ գտած են ճշգրիտ եւ կանոնաւոր : Ժողովս գնահատեց Կեդր. Գործ. Մարմնոյ Գանձապահը ծափերով՝ իր խղճամիտ աշխատանքին համար :

10. Բանաձեւերու հտացում եւ փութարկում .

Բանաձեւերու Յանձնախումբի կողմէն Յրթ. Խօլլիկեան կարգաց հետեւեալ բանաձեւերը, որոնք քուէարկուեցան .—  
Կեդր. Գործ Մարմնոյ մէկ տարուան գործունէութիւնը . Նկատի ունենալով անոնց պայմանները, իրենց լուսագոյնը ըրած են . նամանաւոր նկատի ունենալով կարգ մը Մասնաճիւղերու անհոգ վերաբերումը հանդէպ Կեդրոնին : Դատելով իրենց զեկոյցէն ու հաշուեկշիւէն՝ այս տարի գրեթէ զերազանցեր են նախորդները, Հայաստան զրկելով մէկ օթօ եւ մօտաւորապէս \$6000 : Այս պարագաներու տակ՝ Համազումարս խիստ կերպով կը գնահատէ Կ. Գործը . Մարմնոյ ջանքերը :

Կեդրոնացեալ մեծ ձեռնարկներ . Նկատի ունենալով Ամերիկահայ Խարբերդցիներու ստուար մեծամասնութիւնը՝ Ժողովս կը թելադրէ նորընտիր Կեդր. Գործ. Մարմնին, որ յաօաջիկայ շրջանին կեդրոնացեալ մեծ ձեռնարկներ կազմակերպէ այն գլխաւոր քաղաքներուն մէջ, ուր շատ Խարբերդցիներ կը գտնուին : Սոյն ձեռնարկներու համար Կեդրոնը ապահովելու է շրջանի Մասնաճիւղերու եւ Հայրենակցականներու մասնակցութիւնը, ինչպէս նաեւ բոլոր Խարբերդցիներու նիւթական եւ բարոյական օժանդակութիւնը իր հսկողութեան ներքեւ :

Նամակներ . Յունաստանէն եկած էր նամակ մը, որով օգնութիւն կը խնդրէին գաղթակայան մը հիմնելու : Հայէպէն նամակով մը կը շնորհակալուէին զգեատեղէններ ուղարկելու պարագան : Նաեւ նամակ մը կար Մուրատ Ռաֆայէլեան Յորել . Յանձնախումբէն, որոնք օժանդակութիւն կ'ակնկալէին Միութենէս, Սոյն նամակներուն մտքերն ու նպատակները բոլոր պատգամաւորներու սրտերուն թէեւ շատ մօտիկ, սակայն Միութեանս հիմնական նպատակներէն հեռու ըլլալուն համար՝ Ժողովս թելադրեց բոլոր պատգամաւորներուն, որ իրենց վայրերուն մէջ անհատական միջոցներով ջանան օժանդակութեան բաժին մը հասցնել անոնց այժմէական, զեղեցիկ եւ օգտակար նպատակներուն :

Շնորհակալութիւններ. Համագումարս իր խորին երախտիքն ու շնորհակալութիւնը կը յայտնէ Խ. Հայաստանի կառավարութեան որ ամէն օժանդակութիւն տուած են անդեալ 10 տարուան ընթացքին: Շինարարական այս մեծ գործին մէջ մենք ոչինչ պիտի կըրնայինք ընել, եթէ անոնց հայրենաշինութեան մաքուր զգացումներն ու թելադրութիւնները չըլլային:

Մասնաւոր Շնորհակալութիւ. 204-ի Երեւանի Գլխաւոր Վարչութեան, որոնք մեր ամէն մէկ առաքումները իրենց պատկան տեղը հասցուցին, շինարարական գործը յոռաջ տանելու համար:

Շնորհակալութիւն. Նոր Խարբերդի Հաւաքական Տնտեսութեան կազմին, որոնք իրենց գեղուցումներով եւ բացատրական նամակներով մեզ տեղեակ պահեցին:

Գնահատութիւն եւ Շնորհակալութիւն. Մեր նախկին ներկայացուցիչ Մ. Մազմանեանին, որ նախորդ տարուան մինչեւ կէս չորջանին մեզ տեղեակ պահեց եւ իր բոլոր կարելի միջոցներով մեզի տուաւ կատարուած շինարարութեանց հարազատ պատկերը: Թէ եւ ներկայիս Մ. Մազմանեան հրաժարած է մեր ներկայացուցչի պաշտօնէն, սակայն իր սիրտն ու զգացումը մեզի հետ է: Համագումարս կը գնահատէ Մազմանեանի 10 տարուան անխոնջ եւ եւանդուն գործունէութիւնը:

Գնահատութիւն եւ Շնորհակալութիւն Ֆրանսայի Երջանի մեր Կեդր. Մարմնին, նաեւ Ֆրանսայի բոլոր Մասնաճիւղերուն, որ ամբողջ տարի մը իրենց յարարութիւնը պահեցին Կեդր. Գործ. Մարմնի հետ՝ տեղեակ պահելով իրենց շրջանի գործունէութեան է իրենց բարոյականին հետ նաեւ տուած են նիւթական որոշ օժանդակութիւն:

Շնորհակալութիւն Ամեր-204-ի Կեդր. Վարչութեան, որ մեր գրամական առաքումները կատարած են խղճմտօրէն Խ. Հայաստանի եւ 204-ի Երեւանի Գլխ. Վարչութեան հետ:

Շնորհակալութիւններ մեր բարեկամ թերթերուն, որոնք անցեալ տարուան շրջանին մեր նամակներուն եւ գրութիւններուն տեղ տուին, որոնց կարգին են «Բանուոր» օրաթերթը, «Պայքար» օրաթերթը, Քալիֆօրնիոյ «Նոր Ուղին», «Նոր Օր», «Հ. Կոչնակ» եւ «Եր. Հայաստան» թերթերը:

Շնորհակալութիւն Նիւ Եորքի Տիկնանց Մասնաճիւղին եւ հացկերոյթի յանձնախումբին, որ իրենց գեղեցիկ եւ ճոխ սեղանով

պատուեցին բոլոր պատգամաւորները եւ օրուան հիւրերը:

Շնորհակալութիւն Օրուան Դիւանին, որ լուրջ եւ համբերատար կերպով վարեց իրենց վստահուած դժուարին գործը:

11. Յաջորդ Պատգմ. Ժողովի Տեղն ու Ժամանակը.

Ժողովը միաձայնութեամբ որոշեց, որ յաջորդ Պատգմ. Ժողովը գումարուի Ուոթերթաունի մէջ, քանի որ սոյն մասնաճիւղէն փափաք յայտնուեցաւ: Որոշուեցաւ ժողովի տեղադրութիւնը մէկ քր ըլլայ, իսկ ժամանակը՝ Կեդր. Վարչութեան ձգուեցաւ:

12. Կեդրոնի Գործադիր Մարմնոյ Ընտրութիւն:

Ընտրողական Յանձնախումբը ինը ընտրելիներու եռապատիկ ցանկ մը ներկայացնելով, պատգամաւորները գաղանի քուէով ընտրեցին հետեւեալները. —

Մուշեղ Աճէմեան	21 քուէ
Գէորգ Կիւլիսսեան	21 »
Յարութիւն Խօլլիկեան	15 »
Յովակիմ Նիկողոսեան	14 »
Տիգրան Էքմէքճեան	14 »
Յակոբ Բարեջանեան	13 »
Գրիգոր Համբարձումեան	13 »
Յովհաննէս Նահիկեան	12 »
Միհրան Գրիբեան	12 »

Յաջորդ առաւելագոյն քուէ ստացողներն էին՝

Տիկ. Փարիզ Ստեփանեան	11 »
Թաթէոս Հէտիցեան	10 »
Լեւոն Պողոսեան	10 »
Շահին Պարսամեան	7 »

Ընտրութիւնը լրանալէն վերջ կարգացուեցաւ շնորհաւորական հեռագիր մը «Բանուոր» օրաթերթին կողմէ, որոնք կը շնորհաւորէին Պատգմ. Ժողովը եւ յաջողութիւն կը մաղթէին:

Ժողովը փակուելէ առաջ՝ Տիկ. Նազըճեան, որ նոր վերարձած էր Հայաստանէն, մասնաւորապէս Նոր Խարբերդէն, հակիրճ տեղեկութիւններ տուաւ հոն կատարուած շինարարութեանց մասին, որ ներկաներու կողմէն խիստ հետաքրքրութեամբ



ունկընդրուեցաւ: Եղած բոլոր հարցերուն սիրայօժար կերպով պատասխանուեցաւ:

Ժողովը փակուեցաւ ժամը 10.30-ին, զիչերը:

Ի Գիմաց՝ ՀԱՄԱ-ԽԱՐԲԵՐԴՅԻԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ  
ՏԱՄՆԵՐՈՐԴ ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

Ատենադպիր՝  
ԼԵՒՈՆ ՊՈՂՈՍԵԱՆ

Ատենապետ՝  
Գ. Մ. ԴԱՆԻԷԼԵԱՆ

## ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀԱՄԱԽԱՐԲԵՐԴՅԻԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԳԻՐ ՄԱՐՄՆԻ

(ՇՐՋԱՆ ՏԱՄՆԵՐՈՐԴ 1936 Հոկ. 11—1937 Սեպտ. 26)

Յարգելի Պատգամաւորներ,

Սոյն Տեղեկագիրը որ պիտի ներկայացնենք անցնող գրեթէ 12 ամիսներու ճշգրիտ, հարազատ եւ համառօտ տեղեկատուութիւնն է, եւ կը խնդրենք ձեզմէ, որ ուշադրութեամբ հետեւիք եղած իրադարձութեանց մօտէն ծանօթանալու համար: Նախ մեր արտագին շնորհակալութիւնը կը յայտնենք մեր բոլոր Մ-ճիւղերուն, Օժնդկ. Հայրենակցականներուն, ձիւնիւր Լիկին, ինչպէս նաև անհատ Սարրերդցիներուն, որոնք մեզի օժանդակեցին ու քաջալերեցին անցնող շրջանին: Այս առթիւ Կեդր-Վարչութիւնս կը շնորհաւորէ ձեզ բոլորդ այն աշխատանքին համար՝ որ տարած էք, ու տակաւին այն շինարարական աշխատանքին՝ որ պիտի գեոտանինք ամէնքս ալ այսուհետեւ:

Կեդ. Վարչութիւնս յարմար սեպեց Պատգ-Ժողովը դուժարել անպատճառ Սեպտեմբեր ամսուն, ըստ մեր կանոնադրին, որ հնարաւորութիւն ունենանք մեր Միութեան նուաճումները տեսնել տարուէ տարի, հիմնարկութենէն մինչեւ օրս:

Պատգմ. Ժողովները ունին իրենց որոշ ընկիւրները. ուստի կը խնդրենք ամէն մի պատգամաւորէն, որ հարցերուն մօտենայ զիտակցարար եւ անխղճիակալ կերպով, որ կարենանք մեր սիրելի Նոր Սարրերդցիներու եւ զօրաւիք գտնուելու հաւաքարար:

Տաօր տարիներ բոլորած ենք Միութեանս հիմնադրութենէն իվեր եւ կ'արժէ որ յետագարձ ակնարկ մը նետենք մեր գործունէութեան վրայ, մեր աշխատանքին պատկերը տեսնելու համար:

Մենք, որպէս հարազատ Սարրերդցիներ, պէտք է հպարտ զգանք մեր 10 տարիներու կատարած նուաճումներուն, մեր հայրենակիցներուն համար երջանիկ օճախ մը հիմնելուն համար: Մեր բոլորիս սրտերը կ'ուռի եւ կը հրճուի, երբ անոնց երջանկութեան լուրերը մեզ կը հասնին: Հաւաքական Տնտեսութեան

# Հ Ա Շ Ո Ւ Ե Կ Շ Ի Ռ

## ՀԱՍՏԱ-ԽԱՆՐԲԵՐԴՑԻԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵՂՐ. ԳՈՏԱԴԻՐ ՄԱՐՄՆԻ

1936. ՀՈԿՏ. 16-էն ՄԻՆՉԵԻ ՍԵՊՏ. 25, 1937

Մ Ո Ւ Տ Ք	1936. ՀՈԿՏ. 16-էն ՄԻՆՉԵԻ ՍԵՊՏ. 25, 1937	1936, ՀՈԿՏ. 22, «Պայքար» բերքին	Ե Լ Ք
1936 Հոկտ. 10, Նախորդ Շրջանին վախճանում	2.805-85		19-80
Գոցում օգնեցին մեզ տրուած ֆրէսիք	110-00		17-00
Նիւ ետքի Մասնագիտւղէն ստացած ենք.—			
1936, Հոկտ. 12,	300-00		4-00
1937, Ապրիլ 15	400-00		7-50
Պատանի Մասնագիտւղէն ստացած ենք.—			
1937, Մայիս 25,	350-00		17-00
» Օգոստ. 21,	850-00		14-90
» » Փոխաուարչիւն ( <i>վերադարձում</i> )	50-00		3-59
նւտրի Մասնագիտւղէն ստացած ենք.—			
1936, Հոկտեմբեր 12	30-50		5-00
Շիֆաւոյի Մասնագիտւղէն ստացած ենք.—			
1937, Յունվար 31,	50-00		50-00
1937, Յունիս 29	75-00		35-00
Լօս Անճէլըսի Մասնագիտւղէն ստացած ենք.—			
1937, Յունիս 19,	200-00		4-00
1937, Սեպտ. 18,	50-00		55-95
Հալեպի Մասնագիտւղէն (Սիւրիա) ստացած ենք.—			
1937, Յունիս 19,	25-00		250-00
նւտրաուղի Մասնագիտւղէն ստացած ենք.—			
1937, Մայիս 25,	50-00		10-00
Յրանալի Շրջանի կեդրոնէն ստացած ենք	240-00		5-00
Բազալէնի Լուս. Ուսումն. Ընկերութենէն.—			
1937, Յունիս 5,	800-00		6-30
Հիւսէլյի կի վերաշինաց Միւրեան կեդրոնէն.—			
1937, Օգոստոս 7,	400-00		40-00
1937, Յունվար 31, Ուրբ. Ա. Նազեանի Փխ. Ծաղկեպա.	53-50		1-00
1937, Փետ. 12, Ուրբ. Տի. Ա. Մանքարեանի Փխ. Ծղի.	61-13		25-00
1937, Փետ. 24, Նուէր Ա. Ազանեանի, Փրովիտենս	5-00		40-00
«Նոր ետքեր» պարբերակի հաշույն մինչեւ օրս.—			
Պատանի Մ-հիւղի եւ Կ. Գործ. Մարմնի միջոցով ծախ.	44-00		2000-00
նւտրաուղի Մ-հիւղի միջոցով ծախում	5-70		6-00
վախճանի Մ-հիւղի միջոցով ծախում	3-75		1-00
Յիլաւէֆիւյ Մ-հիւղի միջոցով ծախում	3-75		60-00
Լիւնի Մ-հիւղէն, Յրանա	4-50		9-00
Պրագիլիայէն, Հարաւային Ամերիկա	6-00		13-25
Մինսկ կոստանեանէն, Հէյվըրի	3-75		1-00
Գ. Ատիլեանէն, Տիբրոյի	3-75		2-00
Փրովիտենսէն	3-60		20-00
Լուս Անճէլըսի Մասնագիտւղէն	7-50		
ԸՆԴՀ. ՄՈՒՏՔ	6.991.83		
ԸՆԴՀ. ԵԼՔ			6.745.77
Պատրաստի դրամ			246-06
			6.991.83

2արլըրատան Թրքոսի ֆոլ (գոցում պէճք)  
 Ամբոյրի ֆոլ կը ճնայ  
 2ի գանձում մէկ 2էք

11. պոսեմբեր 27, 1937  
 Գանձապահ՝  
 ՅՐՔ. ԽՈՒԼԻԿԵԱՆ



15-02-71

ուղարկած վերջին նամակը՝ ասոր կենդանի ապացույցն է: Անոր պարունակութիւնը արդէն ձեզի ծանօթ է. յիշելու պէտք չկայ:

Այժմ անցնինք մեր գործունէութեան, կարճ եւ ամփոփ կերպով: Որպէսզի կարենանք աւելի դիւրաւ հասկցուիլ, մասնաւոր հատուածներու բաժնեցիներ մեր գործունէութեան ղեկուցը:

Միութեանս Կեդր. Գործ. Մարմնի անդամները այս շրջանին հետեւեալներն էին. —

Մուշեղ Աճէմեան	Ատենապետ
Մարտիրոս Տէր Յովհաննէսեան	Փ. Ատենապետ
Գէորգ Կիւլիսսեան	Ատենադպիր
Յովհաննէս Նահիկեան	Փ. Ատենադպիր
Յարութիւն Խօլիկեան	Գանձապահ
Միհրան Գղերեան	Հաշուապահ
Թաթէոս Հէտիցեան	Խորհրդական
Յակոբ Բարեջանեան	»
Յովակիմ Նիկողոսեան	»
Սարգիս Կօչկարեան	Պատուոյ Անդամ

Մեր Նիւ Եորքի Ներկայացուցիչն էր Գէորգ Գանիէլեան, Խ. Հայաստանի Ներկայացուցիչը ժամանակի մը համար՝ Միսաք Մազմանեան: Մեր դրամական բոլոր գործառնութիւնները կատարուեցան ԶՊԿ-ի Գլխ. Վարչութեան միջոցաւ՝ Խ. Հայաստանի Պետական Պանդայի եւ Ֆրրսք Նէշընըլ Պէնի ավ Պոսթրնի հետ:

Մեր առաջին վարչական ժողովը գումարուեցաւ 1936 Հոկտ. 29-ին Պօսթրնի մէջ, Պատգմ. Ժողովէն 18 օր յետոյ: Այս ժողովին մէջ կատարուեցաւ վարչական ընտրութիւնը, բացի Ատենադպիրի պաշտօնէն, որու համար դժուարութիւն ունեցանք յարմար քարտուղար մը չունենալուն համար: Ժողովին ընթացք տալով՝ թելադրուեցաւ յարմարագոյն անձերու անունները, որոնց խոստացան անձնապէս դիմել Կեդրոնի անդամները եւ արդիւնքը տեղեկացնել յաջորդական ժողովներուն: Ցաւ ի սիրտ կուզանք ըսելու, որ այս երկար ժամանակամիջոցին նոյնիսկ՝ չի կրցանք գտնել մեր պահանջներն ու պայմանները լրացնող անձ մը: Բացի մեր ջանքերէն՝ Մ-ճիւղերու ալ դիմեցինք այս ուղղութեամբ. ոչ մի Մ-ճիւղ այս ուղղութեամբ թեկնածու մը ներկայացուց, Շիբաօյի Մ-ճիւղէն գատ, որ վերջերս Գործիչի պաշտօնին իրը թիկնածու յարմար դատած էր Տքթ. Յ. Մովիկեանը:

Այս փնտռուքը մեր նախնական շրջանին բաւական ժամա-

նակ խլեց ու մեզ դրադեցուց, այնպէս որ ստիպուեցանք առժամեայ Ատենադպիրի միջոցով տանիլ գործերը, մինչեւ մեր երկրորդ ժողովը, Յունվար 24, 1937, երբ այլեւս սպասելը անօգուտ էր, ու պէտք էր օրինական ձեւ ստանար ամէն բան:

Այնպէս կարգադրուեցաւ, որ մինչեւ տեւական քարտուղար մը գտնելը՝ գործերուն ընթացք տալու համար՝ Գ. Կիւլիսսեանին ամսական 20 տոլար վճարել իր ժամանակին համար, որպէսզի դիւանական գործերուն հսկէ, նամակներ գրէ եւ արձանագրութիւն պահէ: Առաջարկութիւնը քուէարկուելէ ու վաւերացուելէ ետք՝ գործադրուեցաւ Փետր. 1, 1937-էն սկսեալ: Թէեւ ընկերը դժկամակեցաւ այս կարգադրութեան՝ առարկելով որ իր ժամանակները անյարմար են, սակայն գործին սիրոյն համար ստիպուեցաւ համակերպիլ եղած որոշման:

### ԿԵԴՐՈՆԻ ԺՈՂՈՎՆԵՐԸ

Այս տարի թէեւ միայն չորս վարչական ժողովներ ունեցանք, սակայն սոյն ժողովները կարելի է հաւատարմեամբ նկատել տասի, կամ աւելի, որովհետեւ մեր ժողովները Կիրակի օրերը ընկելով՝ աւելի սպառիչ ժամանակ ունեցանք: Դիւանական ժողովներ ունեցանք յաճախ, ուր Կեդրոնի թելադրութեանց եւ որոշումներուն իր ատենին լուծումներ տրուեցան արագաբար: Մեր ժողովներուն մասնակցեցան նաեւ Օթանդակ ընկերութեանց ներկայացուցիչները, որոնց թելադրութիւնները սիրով ընդունուեցան:

Այս շրջանին հրատարակ հանեցինք երեք շրջաբերականներ, որոնք տուին իրենց արդիւնքը: Թերթերու միջոցաւ տեղեկ պահեցինք հասարակութիւնը կատարուած ու ընելիք ինդիքներու շուրջ: Խ. Հայաստանէն եկած մէկ քանի նամակներ թերթերով հրատարակել տուինք. ասոնք ալ տուին իրենց արդիւնքը:

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԳԾՈՎ. — Հակառակ մեր բողոքներն ու Պատգմ. Ժողովի որոշման ու պիւտձէին՝ վճարովի շրջուն գործիչ մը չի կրցինք ունենալ, նոր Մ-ճիւղեր կազմելու եւ մեր ունեցած Մ-ճիւղերուն այցելութիւններ տալու համար: Գործիչը այն մեքենան է, առանց որու՝ մեր ընթացքը շատ դանդաղ կըլլայ: Երբ այս դժուարութեանց հանդիպեցանք, ուղեցինք որ գէթ հեռաւոր Մ-ճիւղերու համար յարմար մէկը գտնենք, ու Նիւ Ինկլէյնտի եւ մերձակայ շրջաններուն համար բաւականանք Կեդ. Վարչութեան անդամներու օժանդակութեամբ: Կեդրոնի անդամները թէեւ ա-

ուսման ժողովին իսկ պատրաստակամութիւն յայտնեցին այս ուղղութեամբ, սակայն երբ Մարտ եւ Ապրիլ ամիսները իբր յարմարագոյն ժամանակը քէմփէյնի տրամադրեցինք, ու այդ նպատակով յայտարարութիւններ ալ տուել տուինք, սակայն դանազան պատճառներով չի կրցան լծուել այս դործին: Թէեւ զանազան անձերու այս ուղղութեամբ անհատական եւ տեղական գիմումներ ալ եղան, բայց ապարդիւն անցան մեր ջանքերը: Այնպէս որ հետեւեալ շրջանները, ուր կը ծրարէինք Մ-ճիւղեր կազմել, անկազմակերպ մնացին — Լին, Լովէլ, Լորէնս, Հէյլըրհիլ, Հարթֆըրտ, Սփրինկֆիլտ, Փրովիտէնս եւ Սէյլիմ:

Այնպէս կը թուի, որ մեր Խարրերդցիներու համար մեր մէջէն Գործիչ մը գտնելը բաւական բարդ խնդիր մ'եղած է: Աս մասին կարժէ լուրջ ուշադրութիւն դարձնել այս ժողովին մէջ:

**ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐՈՒ ՏՈՒՍԾ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆԵՐ.** — Կը ցաւինք ըսելու, որ Մ-ճիւղերը այ սշրջանին չի ցուցուցին այն եռանդն ու դործունէութիւնը, ինչ որ ըրած էին ասկէ առաջ: Պատճառները մինչեւ օրս անորոշ կը մնան: Կը կարծենք, որ տիրող տնտեսական տագնապը՝ իր ազդեցութիւնն ունի այս վիճակին վրայ: Շատեր նոյնիսկ մեր գրած կրկնակի նամակներուն չեն պատասխաներ: Բայց մենք նորէն չի յուսահատեցանք, քանի որ եղան նաեւ Մ-ճիւղեր, որոնք իրենց լուսադոյնը ըրին ու մեզի մասամբ եռանդ ներշնչեցին մեր աշխատանքին մէջ:

Մ-ճիւղերու բերած նիւթական հաշիւները Գանձապահի Հաշուեկշռին մէջ պիտի գտնէք, բայց գաղափար մը կազմելու համար կարգանք հետեւեալները —

Մասնախիւղերէն եկած Դրամները այս Երջանին

Նիւ Եորք	\$700.00
Ուստր	30.00
Շիքաօ	125.00
Յրանսայի Կեդր. Վարչութիւն	240.00
Պօսթըն	1,200.00
Հալէպ	25.00
Լօս Անճէլըս	250.00
Ուոքսթաուն	50.00

Հայրենակցականներէն

Բազմաշէնի Լուս. Ընկերութիւն	800.00
Հիւսէյնիկի Վերաշ. Ընկերութիւն	400.00

Ընկերութիւններէ ցարդ գանձուած ամբողջական հաշիւը —

Խարրերդի Կրքսց. Միացեալ Ընկերք.	11,771.13
Հիւսէյնիկի Վերաշինաց Ընկերութիւն	4,200.00
Քէսթիկի Ընդի. Միութիւն	3,500.00
Բազմաշէնի Լուս. Ուսում. Ընկերք.	3,400.00
Հոդէի Ուսումն. Ընկերութիւն	2,400.00
Իջմէի Միացեալ Ընկերութիւն	2,000.00
Փարչաննի Ուսումն. Ընկերութիւն	1,200.00
Վերի Խոյի Ուսումն. Ընկերութիւն	1,200.00
Մեծկերտի Ուսումն. Ընկերութիւն	600.00
Խուլու Գիւղի Յրք-Յակ. Գրդ. Միութիւն	346.48
Մորէնիկի Ուսումն. Ընկերութիւն	300.00
Արփատտի Վերաշինաց Միութիւն	150.00
Եփրատի Սանուց Միութիւն	150.00

Գումար 31,217.61

**Մեր Մ-ճիւղերը.** — Պօսթըն, Ճիւնիլըր Լիկ, Ուոթըթաուն, Ուստր, Նիւ Եորք, Ֆիլատէլֆիա, Շիքաօ, Վաքէկըն, Լօս Անճէլըս, Մէքսիօ: Յրանսայի շրջանը՝ Լիօն, Վալանս, Վիէն, Տէսին, Յօնտ Ապընայ եւ Մարսէյլ: Կիլիկիոյ շրջանի մէջ ունինք՝ Հալէպ եւ Պէյրութ:

Այսպիսով՝ թէ Ամերիկայի եւ թէ արտասահմանի մէջ մեր ունեցած Մ-ճիւղերու ընդհանուր թիւն է 18: Ասոնք են, որ կը կազմեն Համա-Խարրերդցիական Միութիւնը:

Մեր անուանական Մ-ճիւղերուն հետ ալ հաւասար կապ պահած ենք միեւնոյն ժամանակ, զրկելով մեր կոչերը, շրջաբերականները եւ թեւադրութիւնները. նոյնիսկ Պատգմ. Ժողովի հըլաւիրազիբ:

Շատ մը տեղերու մէջ խոստացած են կազմակերպուել եւ մօտիկ ժամանակներուն որպէս Մ-ճիւղ հրապարակ գալ: Այս առթիւ թէ եղած են անհատական տեսակցութիւններ եւ թէ զրուած են տասնեակ մը նամակներ: Վստահ ենք, որ մեր ցանած սերմերուն արդիւնքը պիտի կրնայ քաղել յաջորդ Վարչութիւնը:

Սեպտ. 2-ին մեր վարչական ժողովին ներկայ եղաւ Տիթրօթի-թէն Խարրերդցի Պ. Յակոբ Դերձակեան, որ մեծ վստահութիւն ներշնչեց մեզի իր վերադարձին՝ կարճ ժամանակէն Մ-ճիւղ մը կազմելու իր տեղին մէջ ամէն գնով:

Տիթրոիթ Խարբերողներով լեցուն գաղութ մըն է. վստահ ենք, որ կրնայ մեծ օժանդակութիւն տալ Միութեանս, ինչպէս բրած է սկզբնաւորութեան օրերուն: Յաջողութիւն կը մաղթենք:

Միութիւնս գանձած է հետեւեալ գումարները ժամանակագրական կարգով.—

Անճեռնմխեի դրամագլուխ Միութեանս սկզբին	\$8.727.93
Առաջին Շրջան 1927-1928	2.441.32
Երկրորդ Շրջան 1928-1929	9.702.80
Յրրորդ Շրջան 1929-1930	9.730.95
Չորրորդ Շրջան 1930-1931	7.284.15
Հինգերորդ Շրջան 1931-1932	4.265.07
Վեցերորդ Շրջան 1932-1933	5.399.95
Եօթերորդ Շրջան 1933-1934	7.129.63
Ութներորդ Շրջան 1934-1935	2.117.91
Իններորդ Շրջան 1935-1936	5.677.22
Տասներորդ Շրջան 1936-1937	4.185.98
Հանի Յով. Մկրտիչեանի Կտակէն (Հ. Բ. Ը. Մ.)	6.077.00
Մկրտիչ Ա. Թաշեանի Կտակէն	653.46

Հաճի Յով. Մկրտիչեանի կտակած գումարը Հ. Բ. Ը. Միութիւնը զրկած է Ս. Հայաստան եւ պահ գրուած է Պետական Պանքայի մէջ մինչեւ նպատակին գործադրութիւնը:

ՃԻՒՆԻԸՐ ԼԻԿ, ՊՕՍԹԸՆ.— Քիչ յետոյ պիտի լսէք անոնց գեկոյցը, սակայն կ'արժէ որ մտածենք անոնց աշխատանքը արգիւնաւոր դարձնելու մասին: Թէեւ անոնք մեզի պէտք եղած դրամական օժանդակութիւնը չտուին, սակայն անոնց տուած նիւթական օժանդակութիւնները գնահատանքի արժանի են Պօսթընի Սինիքը Լիկի ձեռնարկներուն ժամանակ:

Կը թելագրենք, որ յաջորդ Կեդր. Վարչութիւնը զանոնք իր հովանիին տակ աննէ, քանի որ զեռ երիտասարդ են եւ սորվելու պէտք ունին: Անոնք մեր արժանաւոր յաջորդները պիտի ըլլան, ուստի պէտք է այժմէն քայելու վարժուին, մեզի օգտակար ըլլալու համար:

ԳՕԹԱՆԵՐԸ.— Ինչպէս տեսաք մեր առաջին չրջաբերականն՝ այս տարի Տասը Նոր Տուներու շինութեան համար հանած էինք հետեւեալ Գօթաները: Տեսնենք թէ ինչ չափով կրցած ենք արդիւնք ստանալ:

(Ծանօթ.— Մէկ Տան շինութեան դրամն է \$1,200.00):

1. Ֆրանսայի Շրջան	1 Տան դրամ	Սոցժ.	240.00
2. Պօսթընի Մասնաճիւղ	» » »	լրացած	1200.00
3. Նիւ Եորքի Մասնաճիւղ	» » »	Սոցժ.	700.00
4. Լօս Անճէլըսի Մ-ճիւղ	» » »	»	250.00
5. Ուսար, Ֆիլտ. Ուոքր.*	» » »	»	50.00
6. Շիֆալօ* եւ Վոքէկըն	» » »	»	125.00
7. Մէֆս., Հ. Ամ, Ս. Փօլ, Լիկ	» » »	»	»
8. Խ. Կրք., Քէսթիկ, Հիւսն.*	» » »	»	400.00
9. Բազմաշէնի Լ. Ուս. Ընկ.	» » »	»	800.00
10. Փէրչ., Մժկ.— Հոդէ, Խոյս	» » »	»	»

Ծնթ.— \* Աստղանիշ կրող անուններէն ստացած ենք գումարը:

Եթէ մեր հանած այս Գօթաները լրացուցած ըլլայինք, կըրնայինք դաշիք տարուան համար 10 տուներու համար եւս կարգադրութիւն ընել, բայց կը ցաւինք ըսելու, որ եղան Մ-ճիւղեր եւ Հայրենակցականներ, որոնք նոյնիսկ այս առթիւ ձանձրոյթը յանձն չառին ձեռնարկ մը տալու, Դաշտահանդէս մը սարքելու:

Հոս կարեւոր կէտ մը կայ, որ իւրաքանչիւր Խարբերողներ պէտք է հասնեայ— Եթէ կուզենք որ Նոր Խարբերող մեր ուզածին պէս աւան մը դառնայ՝ պէտք է աւելի աշխոյժով լծուինք ու միասնաբար առաջ տանինք Տուները շինելու գործը: Եթէ չընենք, բնական է, ներգաղթ չըլլար. բնակչութիւն, ճարտարարեւտան ու դարգացումը կանգ կ'առնեն Նոր Խարբերողի մէջ: Մեր նշանաբանը պէտք է ըլլայ՝ Տուն, Տուն եւ նորէն ՏՈՒՆ:

Պէտք չէ այլեւս տեղացիական ճղճիմ խնդիրներով գործին վնաս պատճառել: Մեր դժուարին օրերը անցած են. ամէն ինչ կայ, բացի տուներէն: Շնորհիւ Ս. Հայաստանի կառավարութեան՝ կարճ ժամանակուան մէջ ունեցանք խմելու ջուր, էլեկտրական լոյս, բէտիօ, հեռախօս եւայլն:

Պղտիկ բացատրութիւն մը այս մասին լրիւ դազափար չունեցողներուն համար: Եթէ ներկայ Նոր Խարբերողի դիրքով աւան մը գնելու ըլլայինք, պէտք էր առ նուազն՝ մէկ միլիոն ամերիկեան տոլար վճարէինք այդպիսի բարերէր, բնդարձակ հողի մը:

Մինչեւ հիմա Համա-Խարբերողիականի օժանդակութիւնը՝ եղած է գրեթէ \$71,000.00. այդ այ փոխանակութեամբ կրկնա-

պատկուելով: Մենք, Ամերիկարնակ Սարրերդըյններս, մեր այս փոքրիկ գոհողութիւնով կ'ակնկարենք, որ տասը տարիէն առաջին կարգի տեղ մը ունենայինք, հին Սարրերդի չափ լեցուն բնակիչներով, առևտրական տուներով, շինութեամբ եւ ապրելակերպով: Գուցէ կուզենք մայթերով քաղաք մը, որ անձրեւի պարագային՝ ցեխերու մէջ չի քայլն...: Թէեւ այս ակնարկութեանց տեղի չկայ, սակայն, կ'արժէ որ լուրջ մտածենք, եւ նման արտայայտութեանց համոզիչ պատասխանը տանք:

Չի յուսահատինք, քանի որ ազագան մերն է: Նոր Սարրերդի ներկայ դիրքին ու բարեբեր կլիմային համար՝ շատեր բարի նախանձ ունին: Սպասենք, թող մեր հազարաւոր պողատու ծառերը հասնին, այն ժամանակ մեզ քննադատողներուն կրնանք ցոյց տալ մեր ծաղկած ապագան:

Մաս մը Հայրենակցականներէ անուղղակի դիտողութիւններ կըլլան Միութեանս, ըսելով որ իրենց տուած գրամով շինուած տուներու մէջ իրենց հայրենակիցները չեն բնակիր, եւն.:

Բայց չէ՞ որ անոնք ալ կը բնակին տեղ մը, որ ուրիշ հայրենակցականներու գրամով շինուած է: Այդ խնդիրը մեզի պատկանել աւելի՛ կը պատկանի տեղական բնակարաններու հսկիչ մարմնոյ ու անոր կարգադրութեան:

Այսպիսի խօսքեր փոխանակ օգտակար ըլլալու, շատ անգամ վնասակար կըլլան: Պէտք է զգուշ ըլլանք սկսուած գործին թափը չի կտրելու եւ շինարար գործին լծուելու — մէկը ամէնքի, եւ ամէնքը մէկի նշանաբանով:

ՓՈՆԱՆ ԾԱՂԿԵՊԱՍԿԻ — Սոյն հանգանակութիւնները նախապէս կարեւոր արդիւնքներ տուած են Միութեանս. պէտք է աւելի ուշադրութիւն դարձնենք եւ ներկայացած պատեհութիւններէն օգտուիլ դիտանք: Նպատակը բարի է եւ բոլորիս ալ սրբաին մօտիկ:

Եթէ մեր Մ-ճիւղերը քիչ մը աւելի աշալուրջ գործեն, ամէն պարագային մեր բաժինը կրնանք վերցնել Փոխան Ծաղկեպտակի հանգանակութիւններէն, առանց դժուարութեան եւ այս կերպով մեր շինարարութեանց աւելի դարկ տուած կըլլանք մասամբ:

Կեդրոնի ջանքերով եղած են երկու Ծաղկեպտակի հանգանակութիւններ. Արամ Եղաճեանի եւ Արաքսի Մանթարեանի: Իսկ Մ-ճիւղերն ալ ունին ուրիշներ, որ պիտի ներկայացնեն:

ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ. — Խնդիր մը՝ որ նկատառութեան պէտք ունի: Թէ ինչո՞ւ չի կըցինք «Նոր Սարրերդ»ի Բ. Ե. Գ. թիւերն ալ լոյս ընծայել: Նախ ըսենք, որ բացի Ֆրանսայի շըրջանէն, միւս բոլոր վայրերուն մէջ պէտք եղած աշխատանքը չի տարուեցաւ Ա. թուի տարածման համար: Այնպէս որ մտածեցինք թէ Բ. թիւն ալ նոյն ճամբուն մէջ եթէ ինչայ՝ բաւական ծախսալից բան մը պիտի ըլլայ առանց նիւթական արդիւնքի:

Բացի այս՝ հակառակ մեր գիտումներուն, Մ-ճիւղեր նոյնիսկ չի տուին պէտք եղած տեղական կեանքէ գրութիւններ: Մանաւանդ Տասներորդ Տարեդարձի առթիւ՝ չունեցանք պարբերաթերթի պատշաճ գրութիւններ: Իրականին մէջ չուզեցինք անցնալի սխալին մէջ ինչայ, կրկնութիւններ եւ միակողմանի ընելով թերթը: Ահա այս կարեւոր քանի մը կէտերուն համար՝ ուզեցինք սպասել մինչեւ Պատգմ. Ժողովը, ձեր որոշ կարծիքն ու տեսակէտը հասկնալու համար եւ ըստ այնմ գործի լծուելու: Կամ այն է, որ մասնաւոր խմբագրական կաճառ մը կազմէք Կեդրոնէն դուրս, բայց անոր հսկողութեան տակ՝ այս գործը դիւրացնելու, կամ թերթը ձրի բաշխել: Եւ կամ նախապէս տարուան մը բաժնեկիսն սպասուիլ: Ինչ կերպ, որ յարմար կը սեպէ Ժողովը:

Մեր ձեռքին տակ ունինք սահմանափակ թուով գրութիւններ եւ բանաստեղծութիւններ, ինչպէս նաեւ Մ-ճիւղերու կեանքէն յուրեր, որոնք կրնան օգտագործուիլ այս ուղղութեամբ:

ՄԵՐ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՖՐԱՆՍԱՅԻ ՇՐՋԱՆԻ շԵՏ. —

Ֆրանսայի Շըջանը իր երկրորդ Պատգ. Ժողովը ունեցաւ 1906 Նոյեմբեր 21-ին Վալանսի մէջ: Վարչական կազմը կը բաղկանայ հետեւեալներէ. — Ն. Թէպոյեան, Լ. Ահարոնեան, Պ. Նալպանտեան, Եր. Տէր Ղուկասեան եւ Յ. Կարապետեան, որոնք մեծ աշխատանք տարին եւ մեզ օրը օրին տեղեակ պահեցին իրեն: Գործունէութեան շուրջ: Մասնաճիւղերը գործի լծեցին, կոկիկ գումար մը զրկելով մեզի: Պատգմ. Ժողովի որոշումները մասամբ գործադրած եւ իրենց փափաքին համաձայն աշխատած են Նոր Սարրերդի մէջ Ֆրանսայի Շըջ. ի անունով տուն մը շինելու գրած գոհացնել:

Անոնք կը տանին նոյնքան աշխատանք իր շրջանին մէջ, որքան մենք տարած ենք այս շրջանին համար: Մեր թելադրանքները զինուորական կարգապահութեամբ ու ճշտապահութեամբ ամէն ատեն գործադրած են: Մեր շնորհակալութիւնները:

Անոնց փափաքը մեծ էր այս Պատգամ. ժողովին ներկայ ույսու եւ անձամբ իրենց պատգամը տալու, բայց իրենց վերջին նամակէն կը հասկնանք, որ այլեւայլ պատճառներով պիտի չկրնան ներկայ ըլլալ: Մեզ դրկած են Նոր Խարբերողի շինարարութիւնը բնորոշող 18 նկաներ, որոնց վաճառումով պիտի հոգացուէր մաս մը ճանապարհաճախս: Չափազանց ուրախ պիտի ըլլայինք անոնց ներկայութիւնը վայելելու, աւելի դորաւոր կերպով դարբնելու Համա-Սարբերողիական շղթան երկու երկիրներու միջեւ, Նոր Խարբերողի բարգաւաճումը առաջ տանելու համար:

**ՄԵՐ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅԻՉԸ Խ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՁ.** — Շատերուց ծանօթ է, որ տարիներով մեր Ներկայացուցիչ Մ. Մազմանեան, առանց վճարումի, տարած է Նոր Խարբերողի շինութեան պատասխանատու աշխատանքին մէջ մեզ ներկայացնելու ծանր պաշտօնը: Ասկայն Մայիս 7, 1937 թիւ նամակով, ան մեզմէ կը խնդրէ, որ այլեւս գինք ազատ արձակենք այդ պարտականութենէն, քանի որ Նոր Խարբերողի մէջ այժմ կան պատասխանատու Մարմիններ այդ գործին համար: Ան կը գրէ —

«Մի քանի խօսք իմ Համա-Սարբերողիականի ներկայացուցչի հանգամանքի մասին: Պէտք է նշել որ վերջերս չափազանց դրազուած եմ, մասնագիտական եւ այլ հասարակական աշխատանքներով, այնպէս որ ինձ հնարաւոր չէ յաճախակի այցելել Նոր Խարբերող եւ կմ այդ գործով գնալ զանազան Հիմնարկներ: Ուստի խնդրում եմ որ ինձ ազատէք Համա-Սարբերողիականի ներկայացուցչի պարտաւորութիւնից: Հայաստան ժամանելու թուականից մինչեւ օրս առանց յուսահատելու՝ ներկայացուցչի ծանր պարտաւորութիւնները տարել եմ առանձինն իմ ուսերի վրայ: Իսկ այժմ պայմանները այլ են: Ներկայումս Նոր Խարբերողի շինարարութեան գծով աշխատող օրգաններ ունինք յանձին ՀՕԿ-ի, Գիւղախորհուրդի եւ Կոլխոզի Վարչութեան: Հնարաւորութեան սահմանում դարձեալ իմ բարոյական օժանդակութիւնը չեմ խրնայեր Նոր Խարբերողին, երբ կարիք լինի»:

Այս նամակի ընթերցումէն յետոյ՝ որոշեցինք ընդունիլ քաղաքացի Միսաք Մազմանեանի հրաժարականը, եւ մեր գործը շարունակել իր ցոյց սուած Մարմիններուն հետ:

**ՆՈՐ ԽԱՐԲԵՐՈՂԻ ՀԱԻԱՔՕԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆԸ.** — Այս մասին չափ պիտի չի ծանրանանք, քանի որ անոնց վերջին նամակը՝ որ շրջաբերականով ու թերթերով հրատարակուեցաւ, կենդանի

ապացոյցն է իրենց աշխատանքին: Միայն այսքանը յիշենք, որ ներկայիս Նոր Խարբերողի բնակչութիւնը՝ իրենց սեփական հողի վրայէն ու իրենց ճակատի քրտինքով կը վաստակեն իրենց ապրուստը. ու ասիկա պատիւ է մեզ բոլորիս:

Հաւաքական Տնտեսութեան անդամներու տրամադրութիւնները շատ բարձր են այս տարի. իրենց աշխատանքը աշխոյժ՝ ու Խ. Կառավարութեան իրենց սահմանած վրանը 100 տոկոսով կատարած են: Մենք ալ մեր կողմէն ջանանք որ ներգաղթով՝ աւելւ շատցնենք աշխատող ձեռքերն ու շինութիւնները:

**ՏՍՍՐ ՆՈՐ ՏՈՒՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ.** — Տարուան սկզբէն մեր առաջին գործն եղաւ ամէն միջոցաւ 10 Նոր Տուններու շինութիւնը իրականացնել եւ յաջորդ տարուան համար ալ նոր պատրաստութիւններ տեսնել:

Երեք տարբեր ատեններ 6000 տոյար զրկեցինք: Նոյ. 6, 1936 §2000-00, Յունիս 26, 1937-ին §2000-00, Օգոստ. 23, 1937-ին §2000-00 եւս: Եթէ շատերու մէջ անտարբերութեան ոգին չտիրէր՝ վստահաբար պիտի կրնայինք լրացնել ժամանակէն առաջ, բայց մեր կարծիքին մէջ սխալեցանք: Մանաւանդ Հայրենակցականները, որոնք ոչինչ պատճառով զլացան պէտք եղած օժանդակութիւնը տալ: Հայրենակցականներէն ոմանք նոյնիսկ թերլացան Նոր Խարբերողին իրենց ուղղուած նամակները թերթերով հրատարակել տալ: Նամակներ՝ որոնք մեծ արժէք ունէին, անտարբեր հայրենակիցները խանդավառելու:

**ՎԻՃԱԿԱԿԱՆՈՒԹԻՒՆ.** — Կեդր. Վարչութիւնը, հակառակ Պատգամ. ժողովի որոշման, չի կրցաւ ընդհանուր Վիճակահանութիւն մը սարքել: Թէեւ մեր առաջին ժողովին իսկ նկատի առինք այս խնդիրը, սակայն միւս կողմէն քանի որ Մ-ճիւղերը գոթաներով ծանրաբեռնած էինք, նպատակայարմար չի դասնք նոյն ժամանակամիջոցին խաչաձեւումներ ստեղծել:

**ՆՈՒՔԻ ՄԸ.** — Հար. Ամերիկայի Ան Փավլոյէն, Պ. Շահպաղեան եւ իր շնորհալի կինը Խարբերողիական սիրով տարուած՝ ամէն պարագայի ջանացած են օժանդակել մեզ: Այս առթիւ Կեդր. Վարչութեանս զրկած են Փիլո Գրվըր մը որպէս նուէր՝ յարմար առթիւ օգտագործելու համար: Նոյնպէս իրենց ջանքերով ատենէ մը իվեր լծուած են Մ-ճիւղ մը հիմնելու գործին: Այս առթիւ մեր շնորհակալութիւնը կը յայտնենք:

**ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ** — Այս տարի աւելի պատենութիւն կար Մ-ճիւղերու ձեռնարկները աւելի յաջող ու արդիւնաւոր ըլլալու, քան սեւէ տարի: Այս առթիւ չըջարեալական ու նամակներով կոչ ըրինք բոլոր Մ-ճիւղերու, հրատարակային ձեռնարկներ սարքելու համար: Միայն Պոսթընի Մ-ճիւղը Ապրիլ 25, 1937-ին հանդիսաւոր Տօնակատարութիւն մը կատարեց, որուն նիւթական արդիւնքը թէեւ քիչ՝ բայց բարոյականը շատ մեծ էր:

Տօնակատարութեան օրը Նիւ Եորքէն Պ. Կէլճիքեան խօսեց սքանչելի ճառ մը, որ ներկաներու վրայ մեծ ապաւորութիւն թողուց: Ան մի առ մի թուեց թէ Խարբերողները ինչ մեծ ծառայութիւններ մատուցած են հանրութեան զանազան ասպարէզներու մէջ: Կարգ մը թերթերու մէջ արտասարուեցաւ այս գեղեցիկ ճառը եւ կարժէ որ նախանձախնդիր Խարբերողները փնտտեն ու կարգան գայն, մեր հայրենի մշակոյթին ծանօթանալու համար:

**ԱՌ Ի ԳԻՏՈՒԹԻՒՆ** — ՀՕԿ-ի Գլխ. Վարչութեան նախաձեռնութեամբ՝ 1937-ին Փարիզի մէջ գումարուելիք Համադումարը անորոշ ժամանակով հետաձգուեցաւ: Այս առթիւ Պատգ. Ժողովի մէջ որոշած մեր ներկայացուցիչ Յրթ. Սօլլիկեան չի կրցինք զրկել: Մանրամասնութիւնները կը պակսին այս մասին:

**ՆԵՐԳԱՂԹ** — Թէպէտեւ այս տարի Ներգաղթ տեղի չունեցաւ, բայց գալիք տարուան համար մեծ պատրաստութիւններ կը տեսնուին: Կարժէ որ հիմակուրնէ լրջօրէն Տուներու մասին ջանք թափենք, որպէսզի յառաջիկային Ներգաղթի կարուանէն ետ չի մնան մեր հայրենակիցները բնակարանի պատճառով, ինչպէս որ արտասէցաւ անցեալին: Շինարարութեան թափ տանք այժմէն, եւ մեր զրկելիք գաղթականներու թուին համաձայն տուներ կառուցանենք: Խօսքով Ներգաղթ չըլլար, ոչ ալ առանց դրամի տուն կը շինուի: Անցեալ տարի, երբ Ներգաղթ ունեցանք, մեզի օժանդակող ընկերութիւնները ոչինչ ըրին ճանապարհածախսի մասին: Չենք գիտեր թէ ինչէպէս պիտի ըլլայ գալիքին. սակայն, պէտք է ամէն պարագային պատրաստ գտնուինք:

Վերջին վայրկեանին յուսախար չըլլալու համար՝ որքան որ շատ տուն շինենք, այնքան շատ ներգաղթ կունենանք: Որքան շատ ներգաղթ ունենանք՝ այնքան շուտ բեռերնիս կը թեթեւանայ, ճարտարարուեստին ուժ կը տրուի եւ միաժամանակ՝ մեր թափառական հայրենակիցներուն ապահով օժախ մը ապահոված կըլլանք:

Խ. Հայաստանի Կառավարութիւնը վերջերս Նոր Խարբերող համար գիւղատնտեսութեան նոր վարկեր բացած է, որով կը շինուին հանրային բաղնիք, հիւանդանոց, զրադարան եւ այլ մշակոյթային շէնքեր: Դպրոցի կողքին կը շինուին Շարժապատկերի ու ներկայացման սրահներ:

**ՄԵՐ ՅԱՐԱՅԵՐՈՒԹԻՒՆԸ ՀՕԿ-Ի ԳԼՍ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՀԵՏ.**

Այս տարի մեր բոլոր գործառնութիւնները եղած են Խ. Հայաստանի ՀՕԿ-ի Գլխ. Վարչութեան հետ, ու անոնք ալ օրը օրին մեր թելադրանքները կատարած են ու մեզի զրկած են զանազան առիթներով զրկուած \$6000.00-ի ստացականները: Անոնք տարած են ու կը տանին խոշոր աշխատանքներ: Դաշտային աշխատանքներուն տուած են բոլոր դիւրութիւններ, որ մեր մտքէն անգամ անկարելի էր անցնել: Հայաստանի ՀՕԿ-ի Գլխ. Վարչութիւնը՝ Համա-Խարբերողականի գործակատարն ու մատակարարը եղած է անցնող քանի մը տարիներուն, որուն շատ բան կը պարտինք:

**ԵՐԿՈՒ ՆՈՐ ՄԱՄԱՆՆԻՒՆԵՐ** — Հակառակ մեր ջանքերուն՝ Տար նոր Մ-ճիւղեր ունենալու, այս տարի միայն ունեցանք երկու հատ Կիլիկիոյ չըջանք: 1937 Մարտ 12ին Հալէպի մէջ Մ-ճիւղ մը հիմնուեցաւ, որ վաւերացուէն ետք՝ գործի լծուեցաւ ու մեզի զրկեց \$25.00 դրամ Նոր Խարբերողի համար: Անոնք կը գրեն.

«Լիայոյս ենք, որ զրկարաց պիտի ընդունիք մեր նորակազմ վերաշինացը ձեր հովանիին տակ՝ չհամարելով գայն իբրեւ անշան ոյժ. այլ զօրավիք հանդիսանալով եւ քաջալերելով, որպէսզի աւելի ուձանայ եւ ծաւալի այդ շարժումը գաղութէ գաղութ ուր կապրին հայրենակիցներ, որոնց միջեւ գործակցութեան կապ ստեղծելով՝ առաւելագոյն արդիւնաւորման համար):»

1937 Յուլիս 18-ին կազմուեցաւ նոր Մ-ճիւղ մըն ալ Պէլլութի մէջ՝ Շուտով վաւերացուցինք: Անոնք ալ այսպէս կը գրեն.—

«Նախապէս կուգանք յայտնելու ձեզ, որ Պէլլութի մէջ 60 անդամներէ բաղկացեալ Համա-Խարբերողական Մ-ճիւղ մը կազմեցինք, եւ կը յուսանք յառաջիկային կրկնապատկել մեր թիւը: Աշնան կ'սպասենք, բեղմնաւորելու համար մեր գործն ու աշխատանքը: Մեր Միութեան նպատակն է ենթարկուիլ Կեղրոնի հրահանգներուն:

**ԳԱՆՁԱՊԱՀԻՆ ՀԱՇԻԻՐ.** — Արդէն Գանձապահ Յ. Սօլլիկեան



պիտի ներկայացնէ ձեզ իր հաշիւը. միայն յիշենք, որ այս տարի ունեցած ենք իբր Մուտք՝ \$6,991.83, իսկ Ելք՝ \$6,745.77: Սոյն ելքի գումարին Վեց Հազար տոյարը՝ զրկած ենք Նոր Խարբերդի շինարարութեան համար գործածուելու:

**ԹԵԼԱԴԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ.** — Պէտք եղած տեղեկատուութիւնը, հաշիւն ու գործերը հաղորդեցինք ձեզի. այժմ ունինք քանի մը թելադրութիւններ. —

**Ա.** — Մեր առաջին ու ամենէն կարեւոր թելադրութիւնն է հայաշատ քաղաքներու մէջ Մ-ճիւղեր հիմնել, առանց ասոնց՝ յաջողութիւն չենք կրնար գտնել մեր նպատակին: Հոգ չէ թէ ինչ միջոցով՝ պէտք է ընենք ասիկա: Մ-ճիւղերը պէտք է ըլլան մեր մեքենան, որով զարկ տանք ու առաջ տանինք սկսուած գործը: Առանց այդ մեքենային Միութիւնս չպիտի կրնայ շարժիլ ու կեդր. Վարչութիւնն ալ բան մը պիտի չկրնայ ընել:

**Բ.** — Կանոնադրի ամէն մէկ կէտը գործադրութեան դնելը խիստ կարեւոր է: Բոլոր Մ-ճիւղեր եւ Հայրենակցականները արձագանգ տալու են Կեդրոնի կողմէն եղած ունէ ծրագրին: Տեղական պայմանները, կամ տնտեսական պատճառները առարկելով՝ խնդիրները մէկ կողմ նետելու չէ:

**Գ.** — Ժամանակաւոր կամ լրիւ Գործիչ մը ունենալ, Մասնաճիւղեր կազմելու եւ եղած իրադարձութեանց տեղեկ պահելու գաղութները:

**Դ.** — «Նոր Խարբերդ» թերթը լաւ հիմքերու վրայ դնել ու անպայման լոյս ընծայել ինչ ձեւով որ կ'որոշէք հոս:

**Ե.** — Տասներորդ Տարեդարձը օգտագործել եւ հրատարակային ձեռնարկներ ընել:

**Զ.** — Փետր. 22-ը ընդհանուր Խարբերդցիներու օր նշանակել ամէն շրջանի համար:

**Է.** — Տար նոր տուններու շինութեան պակաս մնացածը շուտով գոյացնել:

**Ը.** — Մեր վերջին թելադրութիւնն է՝ Միութեանս սկզբնա-

կան նպատակէն բնաւ չի շեղիլ. այն է Նոր Խարբերդ շինելու նպատակը: Կը շեշտենք այս կէտը՝ անոր համար, որ յաճախ նամակներ կուղան այլ կարգի օժանդակութեանց համար. մեր պատասխանը եղած է ժխտական:

Այն վստահութեամբ կ'ընենք այս թելադրանքները, որ երբ վաղը ետ վերադառնանք՝ անպայման գործնականացնենք. այլապէս անոնք լոկ թուղթի վրայ պիտի մնան առանց արդիւնքի:

**ՄԱՄՈՒՎ.** — Այս տարի կրնանք ըսել, որ մեզի համակիր թերթերը արտակարգ օժանդակութիւն տուին մեզի, հրատարակելով մեր կոչերն ու Խ. Հայաստանէն եկած նամակները: Ուստի կ'արժէ որ Պատղմ. Ժողովը իր շնորհակալութիւնները յայտնէ հետեւեալ թերթերուն. «Պայքար», «Բանուոր», «Նոր Օր», «Նոր Ուղի» եւ «Երկաթ. Հայաստան» թերթերու խմբագրութեանց:

**ՇՆՈՐ ՀԱԿԱՍԻՔ.** — Մեր ամենամեծ երախտիքը կը պարտինք Խ. Հայաստանի Կառավարութեան, ինչպէս նաեւ Հայաստանի ՀՕԿ-ի Գլխ. Վարչութեան, որոնք տուին մեզ նիւթական եւ բարոյական օժանդակութիւն:

Հաւաքական Տնտեսութեան անդամներուն, իրենց տարած անթերի աշխատութեանց համար:

Նիւ Եորքի մեր ներկայացուցիչ Գ. Դանիէլեանի, որ մեր թելադրութիւնները կատարեց օրը օրին եւ անթերի:

Սոյն Տեղեկագիրը կը յանձնենք Պատղմ. Ժողովին, մաղթելով ձեր աշխատանքներուն կատարեալ յաջողութիւն, ներդաշնակ գործունէութիւն եւ գործի յարատեւութիւն:

**ՀԱՄԱ-ԽԱՐԲԵՐԴ-ՑԻԱԿԱՆ ՄԻՈՒԹ. ԿԵԴ. ԳՈՐԾԴ. ՄԱՐՄԻՆ**

Ատենապետ՝	Ատենադպիր՝
ՄՈՒՇԵՂ Ա.ՃԷՄԵԱՆ	ԳԷՈՐԳ ԿԻՒԼԽԱՍԵԱՆ

ԿԱՆՈՆԱԳՐԷՆ ՔԱՆԻ ՄԸ ԿԱՐԵՒՈՐ ԿԵՏԵՐ

Համա-Սարբերդցիական Միութեան միակ նպատակն է Ս. Հայաստանի մէջ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԳԻ մը հիմնել:

1. Տուներ շինելով յարմար հողի մը վրայ, եւ հոն տեղաւորել մասնաւորապէս Սարբերդ գաւառի հայեր:

2. Ճարտարարուեստներու հաստատումով անոնց գործ ըստեղծել:

Միութեանս կրնան անդամակցիլ Սարբերդ գաւառի Երկսևո հայեր՝ վճարելով տարեկան միայն Մէկ Տոլար տարեվճար:

Մասնաճիւղեր կրնան կազմուիլ հայ գաղութներու մէջ, պայմանաւ որ անդամներու թիւը առ նուազն 5 ըլլայ:

Գրամական գործառնութեանց պատասխանատու է Կեդ. Գործադիր Մարմինը հաւաքաբար:

Գանձապահը 2000 տոլար Երաշխաւորութեան տակ է իր պաշտօնէութեան ամբողջ շրջանին:


Ուսումնասիրաց եւ Հայրենակցական Ընկերութիւններէ ըստացուած գումարները անձեռնմխելի են եւ կը գործածուին միայն Ս. Հայաստանի մէջ Նոր Սարբերդը շինելու համար:

Որքան ատեն որ Երեք Մասնաճիւղեր գոյութիւն ունենան, Միութիւնը իր գործը կը շարունակէ. հակառակ պարագային՝ Միութիւնը կը լուծուի եւ Գանուած բոլոր գոյքերն ու դրամները կը յանձնուին Ս. Հայաստանի օրուան Կառավարութեան, գործածուելու Միութեան նպատակին համար:

ՇՆՈՐ ՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ Կ'ԸՆԴՈՒՆՈՒԻՆ

- Ա. Նուէրներ Անհատներէ,
- Բ. Ուսումնասիրաց եւ Հայրենակցական Ընկերութիւններէ,
- Գ. Կտակներ եւ Ապահովագրութիւններ,
- Դ. Փոխան Ծաղկեպսակի Նուիրատուութիւններ:

Եւ օրը օրին՝ կ'արձանագրուին Ոսկեմատեանի մնայուն էջերուն մէջ, վառ պահելով Նուիրատուի յիշատակը:



Կեդրոնական վարչութեան Անդամներն են.

- |                     |               |
|---------------------|---------------|
| ՄՈՒՇԵՂ ԱՃԷՄԵԱՆ      | Ատեմապետ      |
| ՅԱԿՈՒ ԲԱՐԵՋԱՆԵԱՆ    | Փոխ-Ատեմապետ  |
| ԳԷՈՐԳ ԿԻԼԵԱՍԵԱՆ     | Ատեմադպիր     |
| ԳՐ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ   | Փոխ-Ատեմապր.  |
| ՅԱՐՈՒԹԻԻՆ ԵՕԼԼԻԿԵԱՆ | Գանձապահ      |
| ՅՈՎՀ. ՆԱՀԻԿԵԱՆ      | Հաշուապահ     |
| ՅՈՎԱԿԻՄ ՆԻԿՈՂՈՍԵԱՆ  | Խորհրդական    |
| ՄԻՀՐԱՆ ԳԶԻՐԵԱՆ      | »             |
| ՏԻԳՐԱՆ ԷՔՄԷՔՃԵԱՆ    | »             |
| ՍԱՐԳԻՍ ԿՕՇԱՐԵԱՆ     | Պատուոյ Անդամ |

Միութեանս Հասցէն է. —

GENERAL UNION of HARPOOT

64 P. O. BOX,

SOMERVILLE, MASS., U. S. A.



ՀՀ Ազգային գրադարան

NL0219888

$\frac{1}{0}$

42. 869